Միքայէլ Իշխան ○
Մանուէլ Գծագիր ○

Վրթանէս Կաղնոյ եր-
րորդ Տանուտէր. ○
Գալստան Կաղզվանու
չորրորդ Տանուտէր. ○

Օրինակ նամակի բերդապան իշխանութեան:

## ԳԼՈՒԽ ԾԺԲ.

*Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովըրդեան 'ի գաւառէն գուգարացւոց և Թուղթ փոխանորդութեան նոցա ընդ քեզ Տեառն բաղրամայ մարաշկերտու և երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց հայոց հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ դու 'ի վերայ տանն հայոց, վասնորոյ տուաք նամակ պաշտօնի բերդապանութեան քեզ տեառն բաղրամիտ երիս ամաւ ժամանակաւ, զի դու բաղրամ մարաշկերտուդ բնակեցես 'ի ամուրն յերևանու և ըստ Օրինօք կառավարեցես թէ ամրոցն և թէ 'ի միջի նորա բնակեալ զինուորքն և ամենայն կերպուտ զէնն և շտեմարանքն թէ կերակրի և թէ վառօդի և ամենայն հարկաւորութեան, հնազանդ տանն հայոց, և 'ի մէնջ մերմէ նամակօք կարգեցեալ քաղաքապետին յերևանու, և պատուիրեմք քեզ զի զամենայն զոր ինչ հարկաւորութիւն թէ ամրափակութեան բերդին, թէ հարկաւորութեան պա-*